

ԸՆԿԵՐՆԵՐՍ...

(Գիւղական կեանքից)

Մեր գիւղը վաղո՛ւց թշնամի էր հարեան Ս... գիւղի թուրքերի հետ: Եթէ ձեռքերիցս դար ու մէկս մէկից չվախենայինք, իրար արիւն կը խմէինք... Մեր վէճը կրօնական չէր: Թէև թշնամիներս թուրք էին, բայց նրանք մեզանից սոված, մենք նրանցից քաղցած, ձվ ժամանակ ունէր անօթի փորով հոգու փրկութեան՝ կամ Վոյս հաւատը տարածելու մասին մտածելու:

Մեր վէճը հողային էր, և հողը գիւղացիներին համար հոգուց շատ թանգ է: Խոնչպէս էլ թանգ չը լինի, երբ մի կտոր ուժասպառ դարձած հող ունես, չորս կողմից հարիւրաւոր գայլի աչքեր են տնկած վրան: Տանը մանր ու խոշոր՝ կին ու երեխաներ բերանները հարամու պէս բացած հաց են ուզում այդ արտից, պարտատէրդ աչքերը չորս արած քաղուելուն է նայում, որ դեռ ուտելիք-բնադոնդ ներս չլցրած, փողի տոկոսի տեղ քաշէ տանի, խանթւորն այդ արտի յուսով է ճնիսի» *) նաւթ ու սապոն տուել ու այժմ դեռ արտդ չհնձած, կոտ ***) ու կիսնոց կտոր ձեռքին առաւօտ, երեկոյ դուռ է կտրում, որ չլինի՞ արտդ հընձես ու բերքն ուրիշի բերանն ընկնի... տէրտէրն ամեն օր անո՛ւշ, անո՛ւշ «ողջոյն, որդի» ասելով «տարեհախն» *) է յիշեցնում, իւղը աշին առասպելական բեղմնաւոր դաւթաւը ձեռին գլխիդ տալով հարկն ու մախտին» պահանջում... Ես ի՛նչ գիտեմ, էլ գգիր ու հովիւ, էլ նախըրչի ու չարչի **) էլ ղորուխչի *) ու դարբին, էլ մուրացիկ ու անցորդ բոլորն աչքերը տնկած իրանց արդար ու անարդար բաժինն են պահանջում, էլ ի՛նչպէս արտը հոգուց թանգ չլինի խեղճ գիւղացիներին համար...

*) Ապառիկ **) չափ հացի *) տարեվարձ **) շրջիկ մանրավաճառ
***) հանդսպահ:

Հոգին ի՞նչ է. մի հոգեառ հրեշտակ կայ ուզող այն էլ մի անգամ կ'աննէ կը պրծնես ձեռքից, խոմ ամեն օր, ամեն տարի գլխիդ վերև չի կանգնի ու հարիւր անգամ վճարած պարտքըդ նորից պահանջի...

Հողը թանգ է մեզ համար, շատ թանգ... և Ս...եցիք խրիւ էին մեզանից երկու հարիւր օրավարձից աւել հող. Դեռ այդ ոչինչ, այսպէս թէ այնպէս մարդիկն յաջողեցրին, գործին որոշ օրինական ձև տուին, թէև ողջ դաւաճն էլ գիտէր, որ այդ օրինականութիւնը լոկ 70 ըուբլու մէջ էր կայանում, որ երեք սպիտակ բեխ-մորուքով ծերունիներ, նոյնիսկ մէկը մեր գիւղից, վերցրին ու առանց ամաչելու գնացին դատարանի առաջ երդուեցին, թէ վիճելի տեղը Ս...եցիներին է...

Մեր մէջ կան, շատ կան կարծրելու ընդունակութիւնը կորցրած մարդիկ...

Ասում եմ դեռ այդ ոչինչ, եթէ Ս...եցիներին ոչխարի ահագին հօտերը ոտնատակ չտային մեր արտ ու արօտը, արմատահան չանէին հարիւրաւոր խեղճ մարդոց վերջին յոյսը:

Յունիսի վերջերն էր, գիւղի քաղոցն ու գութնոցը: Մի կողմից հաւար-հաւար քաղում են ու դեռ խոտը չվերցրած, միւս կողմից քաղուորի յետևից գութանն օձի պէս ձգւում, սողում է վարից-վեր, վերից-վար ու սև ակոսներն տետրակի գրած տողերի պէս կողքէ-կողք շարում մոխրագոյն արտի երկարութեամբ: Ման արտերն էլ փոռած, որը կծղել, քիստ է քշում, որն էլ դեռ կապոյտ ծովի պէս ծփծփալով գնում, գալիս, բամու հետ շընգ-շընգալով, ինչ որ դադտուկ բաներ է փսփսում...

Եւ որքան անո՛ւշ, դիւրեկան է այդ շընգ-շընգոցն ու փսփսոցը... կարծես կեանքն ինքն է փսփսում այնտեղ, խեղճ գիւղացու վախկոտ, ամեն քամուց տատանուող, երերուն, թոյլ կեանքը... Վերը մի փոքր ամպ բարձրանայ, բաց կապոյտը մթագրնի—վարն այդ «կեանքը» կը դողայ, կը սարսափի՝ չլինի յանկարծ կարկուտ դայ... Իրիկնադէմ, թէ ամպերը չքանան ու երկինքը հայելու պէս պսպղայ՝... Թոյլ ու երկչոտ «կեանքը» դարձեալ կը սոսկայ՝ չլինի յանկարծ լուսադէմին եղեամբ դայ... Է՛հ, այդ կեանքը թշնամիներ շատ ունի՝ կարկուտ, եղեամբ, ցուրտ ու երաշտ, մուկ ու մորեխ, որդ ու բզէզ հոգեառն են այդ կեանքի... Բայց ի՞նչ արած, այդ դեռ ոչինչ, ինչ երկնքից է գալիս՝ ուղեա-չուղեա համբերութեամբ պիտի տանես... Երկինքը շատ ուժով է... երկնքի դէմ խեղճ գիւղացին ի՞նչ անէ... Սակայն, երբ թոյլ, ամեն քամուց երերացող այդ կեանքի թեղն է կտրում քեզ նման «խեղճ» գիւղացին... մարդ կատաղում, գազան դարձած՝ էլ ինքն իրան մոռանում է... Դէ-

մըդ հարազատ եղբայրդ որ կանգնած լինի, տաք արիւնը կը խմես... էլ հէր մնաց Ս...եցիք, որ ազգով էլ թուրք էին...

Կեանքն այդպէս է. սեփական կեանքն անուշ է...

Յունիսին էր. ցորեկ դեռ նոր էր անցել. Վարի չայիրնե-
րն էինք քաղում: Ալ ու խաշխաշ քաղուորից ու փոցղուորից
ասեղ գցելու տեղ չկայ: Կին ու տղամարդ թափել՝ հայ-հաւար
քաղում էինք, հաւաքում, որ ազատենք մալ-ոչխարի բե-
րանից: Էլ հանաք ու չանաք, էլ խինդ ու ծիծաղ խառնել էինք
իրար. սար ու ձոր դղրդում էր, հարսնիք էր կարծես:

—Մժօ...օօ... Ս...եցոց ոչխարին նայեցէք, ո՛ւր եկաւ...
Յանկարծ գոռաց մէկը:

Նայեցինք. յիրաւի լեռան լանջը մշուշի պէս փաթ-
թած ահագին սպիտակ հօտն իջնում է ցած: Սահմանը վաղուց
անցել էր, սարը մերն էր, բայց դարձեալ ցած էր գալիս:

—Հէ, հէյ... հէր էք քշում, անհոգի, անաստուածներ...
գոռացինք, կանչեցինք, լսող չկայ... հօտն արածելով իջնում է
ցած: Մօտեցաւ ցան արտերին: Մի երկու հօտ էլ լերան միւս
կողմից ելան:

—Ի՞նչ անենք, տղէրք...

Հաւաքուեցինք միմեանց մօտ: Մէկն ասում էր գնանք
գլաւային բերենք, դանդառ անենք. միայն ասում էր գիւղի
մեծերին իմաց տանք. երրորդն առաջարկում էր ոչխարը բշել
գիւղ տանել. չորրորդն, ո՛վ արտ չունէր այդ կողմը, խորհուրդ
էր տալիս ճալլաթ տալ չարին», «թո՛ղ արծեն, չքուին, չար կը
հօտի էդ շներից»...

Մինչդեռ ամեն մէկը տաք-տաք իր առաջարկութիւնն էր
պաշտպանում ու մեծամասնութիւնն արդէն ոչխարը գիւղ քշե-
լու կողմն էին, յանկարծ կարծես գետնից գլխներիս վերև բու-
սան չորս-հինգ ձիաւոր մեր գիւղի մեծերից:

—Թաղեմ ձեզի պէս ջահէլը, թաղեմ... ծօ ի՞նչ իշի պէս
բերաններդ բաց կանգնել նայում էք... չէ՞ք տեսնում շան ոչ-
խարն ո՛ւր եկաւ, արտ ու արօտ աւրեց...

—Ի՞նչ անենք, Բաղարամ աղա... բոլորս կարմրած հար-
ցրինք:

—Ի՞նչ անէ՞ք. գետինը մտիք, ի՞նչ պիտի անէք... Ամօթ
չէ մեր գիւղի անուանը, որ էսքան ջահէլ-ջիւան կտրիճներ
կանգնել էք ու աչքերուդ առաջ Ս...-եցոց ոչխարը ձեր մանր
ու խոշորի ռզիւլիկը *) կը կտրէ... Քաշեցէք գերնադիներդ
գնացէք էս սահաթիս զարկէք, ջարդեցէք էդ անաստուած

*) Ապրուստ:

շուն-շան որդոց, մարդ ու ոչխար, քշեցէք գիւղ բերէք... էդոնց արունքն իմ ճտիս... ես պատասխան կուտամ... Ահան մենք էլ յետևներիցդ կուգանք... Միք վախենա, հասիք...

Ու մենք քաշեցինք գերանդիններս, մերկացրած սրերի պէս պապղացնելով օդի մէջ, վազեցինք...

Սենթ, խելառ ջահէլ, մի փոքր քամի էր պէտք, որ թռչէինք...

Ես վազում էի ամենից առաջ. յետևիցս հե-հեալով կըրն-կոխ հետևում էր շունս՝ Ձէմբէրը, որ միշտ հետս արտն էր գալիս, որ երեկոյեան միասին գնանք գուլթնին մալը պահելու, ապա 10—12 հատ «Շահէլ-Չիւան կտրիճներ» վազում էին բոլոր ուժով, հե ի հե... Արտի կսկիծ էր, հեշտ բան չէր...

Դեռ լերան լանջը չէինք հասել, որ գողութեան մէջ փորձուած՝ խորամանկ հովիւները ոչխարի բերանը վեր դարձուցին *): Երանիկ... բացուեց յանկարծ հրացանն ու ոչխարն հեղեղի պէս տափնելով ծովի պէս ծփացող շարքով ցան արտերը, խրտնեց լեռն ի վեր... Ձի քշես չի հասնի խրտնած ոչխարի յետևից...

Փախցրին... Վերջին ոյժերս հաւաքած, առանց յետ նս-յելու, զոռ եմ տալիս ոտներին... Սարն անցայ: Հօտերից երեքըն արդէն չկային, կորել էին, կարծես թե ունէին թռան: Մի հօտ մենակ, սահմանի վրայ փռուած, հանգիստ արածում էր. 17—18 տարեկան հովիւն էլ գլուխը դրած չնշոտ քարին՝ անուշ ընում էր... Սեղճն երևի բանից բէխաբար էր...

—Անդգամ, մինչև հիմա արտերն էիք աւրում, հիմա սուտ ըռն ես եղել... հարամգաղա... գոռացի գլխի վերև, ու մինչդեռ խեղճը ընաթաթախ աչքերը ճմլելով առաջն արածող ոչխարն էր որոնում, որ քշի վեր, կարծելով, թէ յիրաւի ցան արտի մէջ է, թրանխկ... բոլոր ուժովս գերանդին վրայ բերի գլխին...

Հովիւն ընկաւ... Ես անտէր հօտը կիսեցի ու կռուի դաշտից յաղթական փառքով դարձող հերոսի ինքնաբաւականութեամբ, քշեցի ցած՝ դէպի մեր սահմանը:

Ես գիտէի, որ դա այն հօտերից չէ... բայց միևնոյն էր. այսօր չէ երեկ աւրած կը լինէր մեր արտերը, վերջապէս բաւական էր, որ Ս...եցոց էր, էլ մեղաւոր ու անմեղ փնտռողն ձգէր...

Հեռուն՝ չայիրներում երևում էր հաւաքուած կին ու տը-

*) «Ոչխարի բերանը դարձնել» նշանակում է արածելու ուղղութիւնը փոխել:

դամարդոց բազմութիւնն ու ես հրճուանքով պատկերացնում էի թէ ի՛նչպէս պիտի գովեն—գովարանեն ինձ գիւղի աղաներն ու քաղցր ժպտալով նայեն ջահէլ հարս-աղջիկները...

Ընկերներս չկային... երեւի նրանք էլ միւս հօտերի յետեւից գնացած կը լինէին: Դայց ո՛րքան ուրախ կը լինէի, եթէ նրանց չյաջողուէր... փառքի պսակը մենակ ինձ կը մնար...

Յիմա՛ր ջահելութիւն...

Ամբողջապէս մտքերիս հետ տարուած, հաւար-հաւար քշում էի ոչխարը ցած՝ լեռն ի վայր, երբ յանկարծ մօտիկ ձորից դէմս ելան 15—20 ձիաւոր Ս...եցի թուրքերը...

Սիրտս դողաց, ոտներս թուլացան ու ակամայ աչքս ընկաւ մեր չայիրները... Մօտ էին... նոյն բազմութիւնն արձանի պէս կանգնած դիտում էր իմ կողմս: Ձիաւորները մօտեցան. միւս կողմից էլ գիւղաւայրով, ահագին կոպալներն ուսերին՝ լեռն ի վայր պրծաւ Ս...եցոց եայլաւորը... Վտանգն անխուսափելի էր... բայց ես դեռ քշում եմ, բաց չեմ թողնում ոչխարը... Ախր մերոնք էլ մօտ էին, օգնութեան կը հասնէին...

—Ո՛ւր ես քշում, հանրամղաղա...

Առաջս կտրեցին ձիաւորներն ու ձիերի առաջ խառնած՝ սկսեցին ֆոփկ-ֆոփկ պտտացնել...

Ձեռիս պաշտպանուելու ոչինչ չունէի. միակ զէնքս՝ գերանդիս՝ հովուին խփելիս կոտորուել, մի կողմ էր ընկել ու ձեռիս մնացել էր կոտլիկ՝ կիսատ նաթը *): Միակ միջոցը—մնում էր փախչել... Արնկեր թշնամու ոչխարը բերել հասցրել էի այդտեղ. գիւղի պատուաւոր աղաներն ու ջահէլ կտրիճներն ահագին բազմութեամբ կանգնած կէս վերստ հեռու, և ես փախչէի...

Կատուի պէս ցատկուտում էի մի ձիու առաջից միւսի առաջ ու ամեն անգամ աչքս ակամայ մեր չայիրները գցում...

Նոյն բազմութիւնն արձանի պէս կանգնած դիտում էր մեր կողմը...

Էլ ոչինչ չեմ յիշում: Երբ աչքս բացի, գիշեր էր արդէն: Դիթ-բերան արիւնլուիկ, բոլոր ոսկորներս ջարդ ու փշուր՝ լերթիս ընկած էի արտի մէջ... Բոլորած լուսինը հպարտ, յաղթանակը տարած հերոսի պէս ժպտալով, լերան լանջից բարձրանում էր վեր ու խոշոր աչքերը յառած՝ կարծես ինձ էր հեզնում, ծաղրում...

Մենակ էի ամայի դաշտին մէջ, մեն-մենակ. ինձնից մի փոքր հեռու ընկած էր սատկած շունս՝ Ձէմբէրը. երեւի անպի-

*) Գերանդու կոթ:

տաններն սպանել էին խեղճին. մինակ նա էր մնացել մօտս...

Ընկերներս տեսնելով վերահաս վտանգը՝ ձորը մտնող ձիաւորներին, կէս ճանապարհից փախել էին, առանց նոյնիսկ ինձ իմաց տալու թշնամու դալուատը...

Մենակ էի ամայի դաշտին մէջ, մեն-մենակ սատկած շանըս հետ. ու այդ մենակութեան կսկիծն աւելի խիստ էր, քան փշրտուած մարմնիս հազար ու մի արիւնլուայ, պաղած վէրքերի մրմուռը...

Ա՛խ, թ'նչ կը լինէր մարդիկ գոնէ շան կիտի չափ հաւատարիմ ու պարտաճանաչ լինէին ընկերութեան մէջ, մտածում էի ես:

Բայց հէ՛. շան նման քեզ «քսի» կը տան, կը քշեն կրակի դէմ ու իրանք յետ կանգնած նոյնիսկ կը ծաղրեն, կը հռհռան վրադ... Թող պատուեն քեզ, բլբլիկ-բլբլիկ անեն. թե՛մ հոգն է... «ամեն մարդու իր շապիկն է մօտ իր ջանին»...

Զաւախեցի

ԲԱԽՏԻ ԽԱՂԸ

Բախտի խաղ էր—պատահեցանք,
Մըտերմացանք մենք շուտով.
Ե՛ւ սիրեցինք, և՛ հիացանք,
Ե՛ւ ապրեցինք մի՛ սրբտով...

Բախտի խաղ է—բաժանւում ենք,
Զո՛ւր են քո վիշտն ու լալիք.
Է՛հ, սիրելիս, միայն մենք չենք
Բախտի ձեռքում խաղալիկ...

Ա՛լ. ծատուրեան